



ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Գործնական ուղեցույց



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումների ցանկ	2
2. Նախաբան	3
3. Աղետների ռիսկի նվազեցման արդիականությունը և նրա զարգացումները	4
4. ԱՌՆ կարևորությունը համայնքային մակարդակում և նրա փոխկապակցվածությունը զարգացման և կայունության հետ	6
5. ԱՌՆ ֆինանսավորման աղբյուրները/բյուջե	7
6. Պետական լիազոր մարմինը և նրա կառուցվածքը	9
7. Համայնքային մակարդակում ԱՌՆ հիմնական 8 քայլերը	10
7.1. Մարզի ընտրություն	10
7.2. Համագործակցության և համակարգման հիմնում	11
7.3. Համայնքի ընտրություն	12
7.4. Խոցելիության և կարողությունների գնահատում	12
7.5. Աղետներին նախապատրաստման և արձագանքման համայնքային կամավորական թիմի հիմնում	14
7.6. Աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլանի մշակում	17
7.7. Իրազեկման բարձրացում	18
7.8. Կանխարգելման ծրագրեր	19
8. ԱՌՆ շարունակականության և կայունության ապահովումը	20
8.1. Մարզային փրկարար ծառայության աջակցությունը և իր համակարգին ինտեգրում... ..	20
9. Լավագույն պատմություններ և քաղած դասեր	21
10. Ընդհանուր խորհուրդներ	22
10.1. Համայնքներին	22
10.2. Համայնքային կամավորական թիմերին	23
10.3. Համայնքային մակարդակում ԱՌՆ ծրագրեր իրականացնողներին	23
11. Հավելվածներ.....	25
Հավելված 1 - Թիմերի անդամների ընտրության չափորոշիչներ	25
Հավելված 2 - Թիմերի կառուցվածքը	26
Հավելված 3 - Թիմերի տեխնիկական հագեցվածությունը	27
Հավելված 4 - Աղետներին արձագանքման և կանխարգելման գործողությունների պլանի օրինակ	28

1.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԿՆ	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏԻՄ	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
ԱԻՆ	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՓԾ	ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԲՊ	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱԻ	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ
ՃԿԿ	ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՓԶ	ՀՐՇԵԶ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԶՈԿԱՏ
ՊՈԱԿ	ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԲԸ	ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՆ	ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ
ԿԽԿՄ ՄՖ	ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻԿԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀԿԽԸ	ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆԿ	ԱՂԵՏՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Ա ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ
ԽԿԳ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ
ՎԱՅ	ՎԱՂ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ԿՓ	ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԱԸՊ	ԱՂԵՏԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԼԱՆ
ՄԱԶԾ	ՄԻԱՎՈՐԿԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՌՆԱՊ	ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ուղեցույցը մշակվել է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի II փուլի շրջանակներում՝ Հայկական Կարմիր Խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ոլորտում ունեցած երկար տարիների փորձի հիման վրա: Ծրագիրն իրականացվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և բնակչության պաշտպանության դեպարտամենտի, Դանիական, Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչերի համաֆինանսավորմամբ և Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻԿՄ ՄՖ) օժանդակությամբ: Ծրագրի անցկացման համար, որպես թիրախ մարզ, ընտրվեց Շիրակի մարզը, որի բնակչությունը կազմում է շուրջ 285.867 մարդ: Շիրակի մարզից, որպես թիրախ, ընտրվեցին Ազատան, Արեգնադեմ, Առափի, Անուշավան, Բենիամին, Նոր Կյանք, Մեծ Մանթաշ, Մեծ Սեպասար, Կապս, Զեթի, Շիրակ, Սառնաղբյուր, Փանիկ, Պեմզաշեն գյուղական համայնքները և 65 դպրոց: Այսպիսով, ծրագրում ընդգրկված շահառուներն են՝ մոտ 22 000 դպրոցականներ և նրանց հարազատները՝ ընդհանուր թվով մոտ 90 000 մարդ, ինչպես նաև 14 համայնքներից մոտ 30 000 բնակիչ:

Ուղեցույցը նախատեսված է աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և այլ շահագրգիռ կողմերի համար: Ուղեցույցի նպատակն է ընդլայնել եղած գիտելիքներն ու պատկերացումները համայնքային մակարդակում ԱՌՆ մասին և խրախուսել ԱՌՆ գործողությունների իրականացումը զարգացման բոլոր մակարդակներում: Վերլուծելով աղետների մասին վիճակագրական տվյալները՝ ակնհայտ է դառնում, որ ավելի շատ ուշադրություն է պետք դարձնել ԱՌՆ ոլորտին և ԱՌՆ մշակույթի ձևավորմանը: Ուղեցույցի նպատակն է ավելի մանրամասն տեղեկություն տրամադրել ընթերցողներին ԱՌՆ շրջանակներում իրականացվող տարբեր գործողությունների մասին, ինչպես նաև խթանել ՄԱԿ-ի աղետների կառավարման ընդլայնված խմբի կողմից մշակված «Տեղական մակարդակում ռիսկի կառավարում» ձեռնարկի գործնական կիրառումը:

Սույն ուղեցույցի մշակմանն իրենց խորհրդատվական աջակցությունն են ցուցաբերել «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամը, «Լոռե» փրկարար ջոկատ ՀԿ-ը, Միավորված ազգերի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) և ՄԱԿ ՄԳՀԳ-ը /UN OCHA/:

Նյութի բովանդակության պատասխանատվությունը կրում է միայն մշակողը, և այն կարող է չհամընկնել Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության դեպարտամենտի տեսակետի հետ:



EUROPEAN COMMISSION



Humanitarian Aid and Civil Protection

3.

ԱՌՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՆՐԱ

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Աղետների ռիսկի նվազեցումը աշխարհում ընկալվում է որպես աղետների ռիսկերի հայտնաբերմանը (բացահայտմանը), գնահատմանը, նախապատրաստմանը և նվազեցմանն ուղղված գործողությունների համակարգված մոտեցում: Այն նպատակ ունի նվազեցնել բնակչության խոցելիությունը վտանգների հանդեպ և ստեղծել կարողություններ՝ աղետներին արձագանքելու համար:

Դեռևս 1970-ական թվականներից, երբ մարդիկ սկսեցին ավելի խորը ուսումնասիրել հասարակության տարբեր ոլորտների զարգացման տեմպերը, պարզ դարձավ, որ դրանցից յուրաքանչյուրը՝ սոցիալական, տնտեսական, կրթական և այլն, անմիջականորեն կապված են աղետների հետ և պարբերաբար տուժում են դրանցից:

Ժամանակին և մարդկային զարգացմանը զուգընթաց՝ ավելացան նաև աղետների տեսակները, դրանք սկսեցին ավելի հաճախակի տեղի ունենալ և ավելի շատ տարածքներ ընդգրկել՝ դառնալով գլոբալ մարտահրավեր մարդկության համար: Տարբեր երկրների կառավարություններ և հասարակական կազմակերպություններ սկսեցին լուրջ աշխատանքներ տանել ԱՌՆ ոլորտում, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց բնակիչներին և ապահովել կայուն զարգացում: Սակայն տարիների փորձը ցույց տվեց, որ մեծամասշտաբ աղետների ժամանակ պետություններում միայն կառավարման և/կամ աղետներին արձագանքման մակարդակում պատրաստվածության բարձրացման շնորհիվ հնարավոր չէ ԱՌՆ գործընթացում զգալի արդյունքների հասնել՝ առանց ԱՌՆ երեք բաղկացուցիչների կիրառմանը զարգացման բոլոր մակարդակներում:

Հաշվի առնելով վերջին տասնամյակում աղետների տեղի ունենալու հաճախակիացումը և դրանց ավելի աղետաբեր դառնալը՝ ԱՌՆ միջոցառումները և դրանց վերաբերյալ

կազմակերպվող հանդիպումները, որոնք ուղղված էին ռիսկերի նվազեցմանը, սկսեցին ավելի շատ ուշադրություն գրավել և մշտապես լինել տարբեր շահագրգիռ կողմերի քննարկման առարկա: Հատկանշական է «Հյոգոյի 2005-2015 թթ. ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացման գործողությունների ծրագիրը», որն ընդունվեց 2005թ. հունվարի 18-22-ին Ճապոնիայում և մեծ դերակատարում ունեցավ ԱՌՆ ոլորտի հետագա զարգացման գործում: Համաժողովին մասնակցեցին մոտ 160 երկրների կառավարությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, մոտ 60 միջազգային կազմակերպություններ և մոտ 40 երկրների ազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԱՌՆ զարգացման մեջ մեծ փոփոխություններ գրանցվեցին Հյոգոյի գործողությունների ծրագրի մշակումից հետո, քանի որ Գործողությունների ծրագրում ներառված գերակայությունները վերաբերում են բոլորին՝ պետություններին, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին և այլն: Բոլոր դերակատարները պետք է ռիսկերի նվազեցման իրենց մոտեցումներում ստորև ներկայացված հինգ առաջնայնությունները իրականացնեն իրենց ունեցած կարողությունների սահմաններում՝

- երաշխավորել, որ ԱՌՆ հանդիսանում է պետական և տեղական նշանակության առաջնայնություն և ամուրի նստիտուցիոնալ հիմքերի վրա է,
- բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը (ՎԱՀ),
- օգտագործել գիտելիքները, նորարարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար,
- նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները,
- բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստվածությունը բոլոր մակարդակներում:

Մեր ժամանակներում մարդկության կողմից բնական պաշարների անխնա օգտագործման, չպլանավորված ուրբանիզացիայի և դրանց պատճառով տեղի ունեցող կլիմայի փոփոխությունների (ԿՓ) և այլ նմանատիպ խնդիրների հետևանքով ամբողջ աշխարհում գնալով վտանգվում է պետությունների և



համայնքների զարգացումը: Սակայն, գիտակցելով, որ ԱՌՆ շրջանակները ավելի լայն են և խորը, քան խոցելիության նվազեցումը և կարողությունների ստեղծումը, և այն, որ ԱՌՆ-ն առնչվում է բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կայուն զարգացման, շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, ԿՓ մեղմման, գիտակից և բարեխիղճ հասարակության ձևավորման և այլ շատ կարևոր խնդիրների հետ, պետք է այն կիրառել պլանավորման մեջ, դարձնել անբաժանելի մաս զարգացմանն ուղղված յուրաքանչյուր քայլում և ավելի շատ ռեսուրսներ ուղղորդել համայնքներում ԱՌՆ զարգացմանը:

4.
ԱՌՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Յուրաքանչյուր խնդիր, որը կապված է աղետների հետ և առկա է այսօր տարբեր պետություններում և համայնքներում, ավելի հաճախ անցյալում պլանավորման մեջ թույլ տված սխալների կամ թերացումների արդյունք է: Համայնքային մակարդակում ԱՌՆ կիրառումը առավել քան կարևոր է, քանի որ փոքրամասշտաբ աղետների դեմ պայքարելը և նրանցից բխող ռիսկերի նվազեցումը ավելի հեշտ է, և եթե բոլոր փոքրամասշտաբ աղետների ռիսկերը հասցվեն նվազագույնի, արդյունքում կստացվի, որ պետությունում աղետների ռիսկերը նվազեցված են: Աշխարհում բնակչության մոտ 50%-ի եկամտի աղբյուր հանդիսանում է գյուղատնտեսությունը, որն աղետներից ավելի մեծ կորուստներ է կրում, քան մնացած այլ ոլորտները, ուստի, ներդրումներ կատարելով ԱՌՆ ոլորտում, համայնքները կարող են նվազեցնել գյուղատնտեսության կորուստները, ինչն էլ, ուղղակիորեն կապված լինելով մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի հետ, կնպաստի դրա բարելավմանը: Համայնքներում հանդիպում են դեպքեր, երբ ընտանիքներն

աղետներից հետո կորցնում են իրենց ապրուստի գերակշռող մասը, այնուհետև ստիպված են լինում տևական, ծայրահեղ դժվարություններ հաղթահարել՝ կորուստները վերականգնելու համար: Մինչդեռ տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ ԱՌՆ ոլորտի 3 բաղկացուցիչների գործառնությունների իրականացման դեպքում, այն է՝

- աղետների ռիսկերի գնահատում և վերլուծություն,
- աղետներին նախապատրաստում,
- աղետների ռիսկերի կանխարգելում և նվազեցում,

գյուղացիների կատարած ներդրումների որոշակի մաս հնարավոր է լինում փրկել և ապահովել որոշակի կայունություն և զարգացում: Կայուն տնտեսություն ունենալու դեպքում ավելի հավանական է դառնում գրանցել տնտեսական աճ, որն էլ բերում է մարդկային կյանքի լավացմանն ու բարեկեցությանը:

ՄԱԶԾ կողմից Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքում իրականացված հակակարկտային ցանցերի տեղադրման ծրագիրը, որի նպատակն է կարկուտից պաշտպանել խաղողի բերքը, լավագույն օրինակ է, թե ինչպես է ԱՌՆ գործողությունը կապված կայուն զարգացման հետ: Հակակարկտային ցանցերի տեղադրումը ապահովեց բերքի պաշտպանությունը կարկուտների ժամանակ, դա էլ իր հերթին արդարացրեց ներդրումները և խթան հանդիսացավ համայնքներում շահութաբեր գյուղատնտեսական միջավայրի ստեղծմանը: Այս գործողությունները թույլ տվեցին, որ գյուղացիները կարողանան շահույթ ստանալ և շարունակել իրենց գործը: Միայն այս դեպքում ՏԻՄ-երը կարող են հավաքագրել հարկեր և դրանք ուղղել համայնքի այլ ոլորտների զարգացմանն ու կայունության ապահովմանը: Հարկավոր է ճիշտ և համապատասխան ԱՌՆ քայլերի միջոցով հասնել կայուն զարգացմանը: Մեկ այլ օրինակ. ՀԿԽԸ կողմից Շիրակի մարզում իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում հիմնվեցին 14 համայնքային կամավորական թիմեր, իրենց հատուկ հանդերձանքով և փրկարարական գույքով: Այս կերպ մարզում և շահառու համայնքներում բարձրացվեց աղետներին արձագանքման կարողությունները: Շահառու թիմերից մեկը, մեկ տարվա ընթացքում երկու անգամ մեծ հրդեհների հրդեհաշիջման աշխատանքների մասնակից դարձավ: Երկու դեպքերն էլ



2013 թվականին Այգեհովիտ համայնքում տեղացած ուժեղ կարկուտից չէր տուժել միայն այն այգին, որտեղ ՄԱՉԾ-ի և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների կողմից իրականացրած համատեղ ծրագրի շրջանակներում 6000 մ հակակարկուտային ցանցեր էին տեղադրվել:

տեղի էին ունեցել ամռանը, երբ սովորաբար բերքահավաքի ակտիվ սեզոնն է: Համայնքային թիմի անդամները, առաջին անգամ ականատես լինելով հրդեհի բռնկմանը, արագ մոբիլիզացրել էին թիմի բոլոր անդամներին, սկսել հրդեհաշիջման աշխատանքները և, զուգահեռ կապ հաստատելով հրշեջ կայանի հետ և հետևելով մասնագետների հրահանգներին, կարողացել էին ինքնուրույն մարել կրակը և փրկել էին ցորենի դաշտերն այրվելուց: Երկրորդ անգամ դեպքը ավելի վտանգավոր էր և ավելի մեծ կորուստների պատճառ կարող էր դառնալ, եթե չլինեին ՀԿԹ անդամները, ովքեր արագ հասնելով դեպքի վայր՝ ամեն կերպ կանխել էին կրակի տարածումը և կրակը սահմանափակված մեջ պահել մինչև հրշեջների ժամանումը: Այս դեպքում, միայն նրանց օգնությամբ հնարավոր եղավ մարել հրդեհը: Փանիկ համայնքում տեղի ունեցած դեպքերին ճիշտ արձագանքելու շնորհիվ հնարավոր եղավ փրկել առաջին անգամ մոտ 7 մլն դրամի, իսկ երկրորդ անգամ մոտ 250 մլն դրամի կորուստից: Այս օրինակները ցույց են տալիս, որ ԱՌՆ գործողությունների և համապատասխան կարողություններ ունենալու շնորհիվ հնարավոր է կանխել և/կամ նվազեցնել ֆինանսական և այլ միջոցների կորուստներ, որոնց մի մասը հետագայում ծառայելու է զարգացմանը: Աղետները հիմնականում ավելի շատ վնասներ են հասցնում, երբ կառավարման մարմինները և/կամ բնակիչները հաշվի չեն առնում իրենց տարածաշրջանում տեղի ունեցող բնական

և մարդածին աղետներից բխող ռիսկերը և դրանց հետևանքները: Մինչդեռ, ռիսկերի վրա հիմնված պլանավորումը, որտեղ հաշվի է առնվում հավանական կորուստներն ու վնասները, մի քանի անգամ ավելի արդարացված է, քանի որ այս դեպքում ներդրումները կատարվում են ավելի քիչ ռիսկային ոլորտներում և, հետևաբար, կորուստների հավանականությունը նվազում է, իսկ ներդրումների քանակը՝ մեծանում: Բավական է ուսումնասիրել մի քանի ԱՌՆ օրինակներ և կարելի է համոզվել ԱՌՆ արդյունավետության և անհրաժեշտության մեջ:

5. ԱՌՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ/ ԲՅՈՒԶԵ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) պետական բյուջետային համակարգում ներառված են բյուջետավորման երկու մակարդակներ՝ պետական և համայնքային (ՏԻՄ): Պետական բյուջեի եկամուտների

աղբյուրներն են՝ հարկային եկամուտները, պետական տուրքերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտներ: Համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի՝

- համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե),
- համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

Համայնքների բյուջեների վարչական մասը (վարչական բյուջեն) ներառում է՝ Մուտքերի գծով՝ համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները, համայնքի վարչական տարածքում գործող հարկային եկամուտները, տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտներ: Ելքերի գծով՝ ծախսերի գծով՝ օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը: Դրանք են՝

1. ընդհանուր բնույթի պետական ծառայություններ,
2. պաշտպանություն,
3. հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն,
4. կրթություն և գիտություն,
5. առողջապահություն,
6. սոցիալական ապահովություն,
7. բնակարանային կոմունալ տնտեսություն,
8. մշակույթ, սպորտ և կրոն,
9. վառելիքաէներգետիկ համալիր,
10. գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն,
11. լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի),
12. վերամշակվող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն,
13. տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն,
14. կառավարությանը օրենքով վերապահված իրավասությունների իրականացման այլ ուղղություններ:

ՀԿԽԸ կողմից իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում համայնքերը, չունենալով հատուկ գումարներ կանխարգելման գործողությունների իրականացման համար, կատարեցին մասհանումներ իրենց բյուջեի «այլ ծախսեր» տողերից և կատարեցին ներդրում՝ հասկանալով, որ ԱՌՆ կանխարգելման ծրագրերի համար կատարած ծախսերը անդրադառնալու է նաև այլ ոլորտների պահամանմանն ու զարգացմանը:

Համայնքերն իրենց բյուջեների հստակեցված ծախսերը ներառում են իրենց վերապահված լիազորությունների իրականացմանն ուղղված ընթացիկ ծախսերի համապատասխան տողերում, իսկ մնացած բոլոր չնախատեսված և անկանխատեսելի ծախսերը, որի մեջ մտնում են նաև արտակարգ դեպքերը կանխելու և/կամ դրանց արձագանքելու համար ծախսերը, ներառում են «այլ ծախսեր» տողում: Այսպիսով, ստացվում է, որ ՀՀ-ում գործող երկու բյուջեներում էլ ԱՌՆ ոլորտի համար պետական հատկացումներ չկան, ինչը, իհարկե, ուղղակիորեն ազդում է մեր երկրում ԱՌՆ զարգացման և մշակույթի ստեղծման տեմպերի վրա:

Չնայած, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տարբեր համայնքներ իրենց տարեկան բյուջեներում առանձնացնում են որոշակի գումարներ ԱՌՆ վերաբերող խնդիրների համար, սակայն դա բավարար չէ, քանի որ այդ գումարները ավելի շատ ուղղվում են աղետների հետևանքների վերացմանը և ոչ թե դրանց ռիսկերի նվազեցմանը: Որոշ զարգացած երկրներում ԱՌՆ համար բավականին զգալի գումարներ են հատկացվում հենց պետական բյուջեից և միայն այդ ներդրումների շնորհիվ հնարավոր է լինում նվազեցնել պարբերաբար տեղի ունեցող աղետներից բխող վնասները և ռիսկերը:

Հաշվի առնելով տարեց տարի աղետների ավելի հաճախակի տեղի ունենալու և ավելի աղետաբեր լինելու հանգամանքը՝ պետք է համապատասխանաբար ավելի շատ ներդրումներ կատարել ԱՌՆ ոլորտում, այլապես հնարավոր է, որ համայնքներում տարեկան հաշվով աղետների հասցրած վնասների չափերը գերազանցեն եկամուտները:

Այս պարագայում զարգացումը հետընթաց է ապրում և տվյալ տարածքի մարդկանց ապրելու պայմանները գնալով վատանում են: Համաշխարհային փորձն ապացուցել է, որ ցանկացած ճիշտ հաշվարկված ներդրում ԱՌՆ ոլորտում արդարացված է և շահավետ՝ անկախ ներդրման չափից: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գումարների ճիշտ բաշխումը կնպաստի նաև զարգացմանը:

Ավելի մանրամասն տեղեկություն բուլջեների և նմանատիպ այլ թեմաների մասին կարող եք գտնել www.mfe.am ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական էլ. կայքում:

6. ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կառավարության կառուցվածքը բաղկացած է 18 նախարարություններից, որոնց շարքում է Արտակարգ իրավիճակների նախարարությունը (ԱԻՆ), որը իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված արտակարգ իրավիճակներում (ԱԻ) բնակչության պաշտպանությունը (ԲՊ) և հանդիսանում է ԱՌՆ ոլորտում իրականացվող աշխատանքների համակարգողը: ՀՀ ԱԻՆ-ի ենթակայության տակ են գտնվում հետևյալ հիմնական ստորաբաժանումները՝

- Փրկարար ծառայություն (ՓԾ),
- «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալություն,
- Հավատարմագրման և լիցենզավորման գործակալություն,
- Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն,
- Պետական ռեզերվների գործակալություն,
- Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն,
- Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն և այլ պետական մարմիններ, Պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ) և Փակ բաժնետիրական ընկերություններ (ՓԲԸ): Մարզերում տեղի



Նկար 1. Շիրակի ՓԾ Հրշեջ փրկարարական ջոկատների տեղադիրն ու կոնտակտները, աղբյուր՝ <http://mes.am/images/Qartez/ShirakHhpj.png>

ունեցող աղետների և/կամ ԱԻ ժամանակ բնակչության պաշտպանությունը իրականացնում է մարզային ՓԾ-ը: Մարզային ՓԾ-ն նաև ի պաշտոնե և իր լիազորությունների շրջանակներում համարվում է մարզում ԱՌՆ գործողություններին աջակցող հիմնական կառույցը:

Փրկարար ծառայությունը կարևորագույն դերակատարն է հանդիսանում բնակիչներին փրկելու և պաշտպանելու հարցում: ԱԻՆ փրկարար ծառայությունը բոլոր մարզերում ունի հրշեջ փրկարար ջոկատներ (ՀՓՋ), որոնք իրականացնում են հրշեջ փրկարարական աշխատանքներ ինչպես ԱԻ ժամանակ, այնպես էլ խաղաղ պայմաններում՝ արձագանքելով մարզի տարածքում տեղի ունեցող տարբեր տեսակի արտակարգ դեպքերի: Օրինակ՝ Շիրակի մարզում տեղակայված են 6 ՀՓՋ-ներ (տես նկար 1) (Գյումրիում գտնվող թիվ 1 և 2 ՀՓՋ-ները այժմ միացված են իրար), որոնցից 1-ը Գյումրիում է և մեկական՝ Մարալիկ, Արթիկ, Ախուրյան, Ամասիա և Աշոցք համայնքներում: Բոլոր մարզերի ՀՓՋ-ները կարող են արտակարգ դեպքերի մասին տեղեկատվություն ստանալ ճգնաժամային կառավարման կենտրոնից (ՃԿԿ)՝ տեղակայված ԱԻՆ Երևանի գլխամասային գրասենյակում, որի հեռախոսահամարն է 911: Հայաստանում 2010թ.-ին Կառավարության որոշմամբ ստեղծվել է ԱՌՆԱՊ հիմնադրամը,

որի հիմնական նպատակն է աղետների ռիսկի նվազեցման բազմաճյուղ մեխանիզմի հիմնումը: ԱՌՆԱՊ-ի հիմնական մասնակիցներն են ՀՀ իշխանությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ԱՌՆ ոլորտում գործող միջազգային կառույցները և դոնոր կազմակերպությունները, ՄԱԿ-ը, Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը, ՀԿ-ներ, ինչպես նաև ոլորտում ներգրավված գիտական կառույցներն ու անհատ փորձագետները: ԱՌՆԱՊ-ի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկի նվազեցման բազմաճյուղ մեխանիզմի հիմնումը՝ բոլոր դերակատարների ներգրավմամբ: ԱՌՆԱՊ-ը հանդիսանում է ՀՀ-ում ԱՌՆ ոլորտում ներգրավվածների համար ընդհանուր քննարկման դաշտի ձևավորողը և համագործակցության ձևաչափի ընդլայնման հիմնական դերակատարը: Իր լիազորությունների շրջանակներում ԱՌՆԱՊ-ը կազմակերպում է տարբեր ծրագրերի լավագույն փորձի, քաղված դասերի և բացահայտումների փոխանակում՝ տեղական, մարզային և ազգային մակարդակներում:

Ավելի մանրամասն տեղեկություն ԱԻՆ կառուցվածքի և նրա ստորաբաժանումների մասին կարող եք գտնել www.mes.am ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական էլ. կայքում:

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՌՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

7.1 ՄԱՐԶԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆ ծրագրերի իրականացման համար կարևոր է մարզի ընտրությունը, ինչը կատարվում է՝ հաշվի առնելով մի քանի հիմնական չափորոշիչներ: Մարզի ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել՝

- մարզին սպառնացող վտանգները, դրանց

- տեղի ունենալու հաճախականությունը և հասցրած վնասի չափերը,
- տեղում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կարողությունները,
- տվյալ տարածքում կառավարման մարմինների ծրագրային գործողություններում ներգրավվելը և պատրաստակամությունը,
- այլ նմանատիպ ծրագրերի առկայությունը, և այլն:

ԱՌՆ ծրագրերի իրականացման համար, առաջնորդվելով վերոնշյալ չափորոշիչներով և համագործակցելով ազգային իշխանությունների՝ Տարածքային կառավարման նախարարության (ՏԿՆ), ԱԻՆ, Ազգային վիճակագրական ծառայության և այլ գործընկերների հետ, հնարավոր է կատարել ճիշտ ընտրություն և առավել երկկողմանի արդյունավետ ծրագրեր իրականացնել: Սակայն մարզի ընտրությունից հետո, համագործակցելով մարզային իշխանությունների հետ և ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, պետք է նաև ընտրություն կատարել համայնքների միջև, քանի որ բոլոր համայնքները չեն, որ ընտրվում են որպես թիրախային՝ ծրագրերի սահմանափակ բյուջեների պատճառով: Ազգային մակարդակում գործընկերների հետ հանդիպումներում կարելի է նաև ներգրավել դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներին: ԱՌՆ ոլորտում որպես գործընկեր կարևոր է ԱԻՆ, որպես պետական լիազոր մարմնի և ԱՌՆԱՊ-ի հետ համագործակցությունը, քանի որ ԱՌՆԱՊ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումներում ներգրավված են ԱՌՆ ոլորտում գործող բոլոր շահագրգիռ կողմերը, որոնք ներկայացնում են իրենց ընթացիկ և ապագա ծրագրերը, և դրա շնորհիվ հնարավոր է լինում նվազեցնել ծրագրերում իրականացվող գործողությունների կրկնօրինակումները: ԱՌՆԱՊ-ի հետ համագործակցությունը նաև հնարավորություն է տալիս ծրագրային նոր գործիքների և լավագույն փորձի փոխանակմանը: Յուրաքանչյուր ծրագրի համար կարևոր է համապատասխան շահառու ընտրելու և սահմանելու գործընթացը՝ ծրագրի իրականացման հետագա հաջողությունը ապահովելու համար:

7.2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆՈՒՄ

Ցանկացած ծրագրի իրականացման համար կարևոր է համակարգման գործընթացը, իսկ ԱՌՆ ծրագրերի իրականացման համար համակարգումը առավել կարևոր է, քանի որ ԱՌՆ ծրագրերը միաժամանակ առնչվում են տարբեր ոլորտների հետ՝ կրթություն, առողջապահություն, բնակչության պաշտպանություն, սոցիալ-տնտեսական համակարգ, բնապահպանություն և այլն:

Համակարգման խնդիրը լուծելու նպատակով ցանկալի է հիմնել տարբեր ոլորտների պատասխանատուներից (ներկայացուցիչներից) բաղկացած համակարգման հանձնաժողովներ, թիմեր և/կամ աշխատանքային խմբեր, որոնց նպատակն է պարբերաբար (սովորաբար 2-3 ամիսը մեկ անգամ) կազմակերպվող հանդիպումների միջոցով ծանոթանալ իրականացվող և պլանավորված ծրագրերին ու գործողություններին, քննարկել և համաձայնեցնել դրանք բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Հանդիպումների ժամանակ պետք է որոշել նաև, թե որ ոլորտի ներկայացուցիչը ինչպես կարող է ներգրավվել և աջակցել ծրագրի իրականացմանը: Այս հանդիպումների ժամանակ տեղի ունեցող քննարկումներն ու ծրագրի իրականացման մասին ներկայացումներն ապահովում են շահառու համայնքների ղեկավարների և/կամ ներկայացուցիչների



ՀԿԽԸ նախագահ Մ. Մնացականյանը հանդիպեց Շիրակի մարզպետ Ա. Գիզիրյանի հետ:



ՀԿԽԸ Գյումրիի մարզային մասնաճյուղում ԱՌՆ ծրագրի շրջանակներում կազմակերպված համակարգման հանձնաժողովի հանդիպում:

տեղեկացվածությունը ծրագրին առնչվող բոլոր հարցերի շուրջ և ինտեգրվածությունը ծրագրի գործողություններին:

ՀԿԽԸ կողմից իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում համագործակցության հիմքը դրվեց ՀԿԽԸ նախագահ Պրն. Մ. Մնացականյանի և տվյալ ժամանակ պաշտոնավարող Շիրակի մարզպետ Պրն. Ա. Գիզիրյանի հանդիպման ժամանակ, որտեղ մարզպետին ներկայացվեց ծրագրի նպատակն ու մանրամասները և մարզպետը հայտնեց ծրագրին աջակցելու իր պատրաստակամությունը: Հետագայում մարզպետը նշանակեց պատասխանատու անձ՝ մարզում համակարգմանն ուղղված աշխատանքները իրականացնելու համար: Առաջին հանդիպումը կազմակերպվեց մարզպետարանում, որին մասնակցում էին ծրագրի շահառու 14 համայնքների ղեկավարները, մարզային ՓԾ-ը և ՀԿԽԸ: Ելնելով փորձից՝ խորհուրդ է տրվում ծրագրեր սկսելուց առաջ հանդիպում ունենալ ընտրված տարածքի/ մարզի ղեկավարման մարմինների վերին օղակի հետ:

Համակարգման արդյունավետության և ամրապնդման համար կարևոր է մարզային ԱՌՆ

թիվերի դերը, քանի որ մարզային ԱՌՆ թիվերում ընդգրկված են հիմնականում մարզպետարանի տարբեր վարչությունների պետերը և/կամ տեղակալներ, առաջատար մասնագետներ, որոնք բավականին տեղեկություններ ունեն մարզի տարբեր խնդիրների՝ այդ թվում ԱՌՆ վերաբերյալ, և կարող են իրենց դրական ազդեցությունը և մեծ ներդրումն ունենալ ծրագրի իրականացմանը:

7.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ընտրությունը հիմնականում կատարվում է երկու փուլով՝

- Առաջնային, երբ կատարվում է նախնական ընտրություն և տեղեկատվության ամփոփ ուսումնասիրություն՝ ըստ ծրագրի համապատասխան չափորոշիչների: Առաջնային ընտրության ժամանակ հաշվի է առնվում տվյալ մարզպետարանի, մարզային ՓԾ-ի և ԱՌՆ ոլորտում գործունեություն ծավալող այլ կազմակերպությունների ունեցած տեղեկատվությունը, ինչպես նաև դիտարկվող համայնքում տեղի ունեցած աղետների, դրանց պատճառած վնասների մասին տեղեկատվությունը:
- Վերջնական ընտրությունը իրականացվում է նախնական ընտրված համայնքներ կատարվող այցելությունների, համայնքային իշխանությունների հետ հանդիպումների, սկզբնական տեղեկատվության հստակեցումների և, իհարկե, համաձայնությունների ձեռք բերման արդյունքում:

Այցելությունները հնարավորություն են տալիս ավելի պատկերավոր և մանրամասն տեղեկատվություն ստանալ շահառու համայնքի մասին՝ ուղիղ դիտարկումների, հարցազրույցների և համայնքի բնակիչների հետ հանդիպումների միջոցով: Վերջնական ընտրության ժամանակ պարտադիր պետք է հաշվի առնել մարզպետարանի և ՓԾ-ի կարծիքը և դիրքորոշումը, քանի որ համայնքների արդյունավետ ընտրությունը բազմակողմ (մարզպետարան, ՏԻՄ, ՓԾ և այլն) քննարկումների վրա հիմնված գործընթաց է: Համայնքի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել՝

- համայնքի ծրագրում ընդգրկվելու ցանկությունը,
- համայնքին սպառնացող վտանգները և

- դրանցից բխող հավանական վնասները,
- համայնքի տեղադիրքը և ռեսուրսների հասանելիությունը,
- համայնքի կարողությունները,
- համայնքի տնտեսական կարգավիճակը,
- համայնքում ծրագրի իրականացման անհրաժեշտությունը,
- բնակչության թիվը,
- ծրագրի արդյունավետ իրականացման համար այլ կարևոր գործոնները (Օրինակ՝ համայնքապետի ներգրավվածությունը և պատրաստակամությունը),
- և այլն:

Համայնքի ընտրության գործընթացում կարևոր է նմանատիպ տեղեկատվության հասանելիությունը, քանի որ այն պետք է նաև կիրառել հետագա պլանավորման համար: Իհարկե, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում չափորոշիչներին լիովին համապատասխան ընտրություն կատարել, սակայն դրանց հաշվի առնելու դեպքում ծրագրի իրականացման հետ կապված ապագայում գլոբալ խնդիրների առաջացման հավանականությունը խիստ ցածր կլինի:

7.4 ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Խոցելիության և կարողությունների գնահատումը (ԽԿԳ) գործիք է, որի միջոցով բացահայտվում են համայնքին սպառնացող վտանգները, առկա խոցելիությունը և սահմանվում է աղետներին արձագանքման առկա կարողությունները: ԱՌՆ ծրագրերում ԽԿԳ հանդիսանում է համայնք մուտք գործելու առաջին քայլը, որը հնարավորություն է տալիս ծրագրի սկզբնական փուլում ճշգրիտ տեղեկատվություն ստանալ համայնքում տիրող իրավիճակի վերաբերյալ: ԽԿԳ հիմքում պետք է ընկած լինի մասնակցային մեթոդը, և իրականացվի առնվազն 8 հետևյալ քայլերի միջոցով՝

1. երկրորդային տվյալների հավաքագրում,
2. ակնադիտական զննում,
3. քարտեզագրում,
4. կիսակառուցվածքային հարցազրույց,
5. ֆոկուս խումբ,
6. սեզոնային և պատմական օրացույց,
7. հիմնական դերակատարների ցանցային աղյուսակ,
8. բնակչության զանգվածային հարցում:

Կարողությունը՝ համայնքներում կամ հասարակության մեջ առկա բոլոր ռեսուրսների, գիտելիքների և ուժեղ կողմերի միավորումն է, որը կարող է օգտագործվել համաձայնեցված նպատակներ իրագործելու համար: Օրինակ՝ աղետների ազդեցությանը դիմակայելու, ինչպես նաև նվազեցնելու աղետի հետևանքները և ռիսկի չափը: Կարողությունը կարող է ընդգրկել ենթակառուցվածքները և նյութական միջոցները, հաստատությունները, հասարակության հարմարվելու ունակությունը, ինչպես նաև մարդկային այնպիսի գիտելիքները, հմտությունները և կոլեկտիվ ունակությունները, ինչպիսիք են՝ սոցիալական հարաբերությունները, առաջնորդումը և կառավարումը:

Խոցելիությունը՝ համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ այն պայմաններն ու բնութագրերն են, որոնք բարձրացնում են վերջիններիս՝ վտանգի ավերիչ ազդեցություններին ենթարկվելու հավանականությունը: Գոյություն ունեն նյութական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական տարբեր գործոններով պայմանավորված խոցելիության բազմաթիվ ուղղություններ, օրինակ՝ շենքերի նախագծման և կառուցման ցածր որակը, հասարակության իրազեկվածության և տեղեկատվության ցածր մակարդակը, ինչպես նաև՝ պետական կառույցների կողմից ԱՌՆ առաջնային չհամարելը:

ԽԿԳ-ն նաև լավ միջոց է հանդիսանում համայնքում ԱՌՆ վերաբերյալ ակտիվություն մտցնելու և ակտիվ բնակիչներին բացահայտելու գործում: Հետագայում ակտիվ բնակիչներին առաջարկվում է ներգրավվել ԱՌՆ գործողություններում և հանդես գալ որպես ՀԿԹ անդամ, ինչը հեշտացնում է արագ և որակով ՀԿԹ ձևավորումը:

ԽԿԳ, ինչպես նաև ԱՌՆ այլ գործողությունների իրականացմանը խոչընդոտող հնարավոր դեպքերն են՝

- Եղանակային պայմանները, օրինակ



ԽԿԳ ընթացքում բացահայտված խնդիր: Ծրագրի շահառու Մեծ Սեպասար համայնքը հարևան համայնքի հետ կապող կիսաբանդ կամուրջ:

առատ տեղումների ժամանակ հնարավոր չէ կատարել լիարժեք ակնադիտական զննություն:

Այս դեպքում խորհուրդ է տրվում հետաձգել այցելությունը, հնարավոր է մի քանի օրով՝ մինչև կլիմեն բարենպաստ եղանակային պայմաններ:

- Երբ այցելել եք համայնք նախապես



ԽԿԳ ընթացքում բացահայտված խնդիր: Շիրակի համայնքի գետի հունը բարձրացել է, և տեղումների ժամանակ ջուրը հոսում է կամուրջը վրայով՝ անանցանելի դարձնելով ճանապարհը:

պայմանավորված հանդիպումը կազմակերպելու,

- սակայն մասնակիցները մի քանիսն են և/կամ ընդհանրապես չեն եկել:

Այս դեպքում խորհուրդ է տրվում չհուսահատվել և հետաձգել հանդիպումը, փորձել հասկանալ առաջացած խնդրի պատճառը և, երկրորդ անգամ խնդիրներից խուսափելու համար, ևս մեկ անգամ հանդիպել համայնքապետի հետ, քննարկել ստեղծված իրավիճակը և պայմանավորվել հանդիպումը հետաձգելու մասին:

- Երբ կազմակերպվել է հանդիպում համայնքի բնակիչների հետ, սակայն նրանք չեն ցանկանում մասնակցել հանդիպմանը, թերահավատորեն են վերաբերվում և կարծում են, որ այն կարևոր չէ:

Այս դեպքում պետք է նախ փորձել հասկանալ բնակիչներին, թե ինչու են նրանք նման կերպ կարծում, հետո փորձել ցույց տալ հանդիպման թեմայի և իրենց անհանգստացնող խնդիրների միջև կապը և հանդիպումը անցկացնել երկկողմանի կարծիքների փոխանակման և քննարկումների տեսքով:

ԽԿԳ կիրառումը

- թույլ է տալիս իրականացնել իրավիճակի ճիշտ վերլուծություն,
- օգնում է հաջորդական գործողությունների ճիշտ պլանավորմանը,
- օգնում է բացահայտել խնդիրների լուծման իրական ուղղությունները (միջոցները):

Շատ հաճախ, համայնքները ոչ այնքան մեծ աղետներից բավականին շատ կորուստներ են կրում՝ իրենց խոցելիության բարձր աստիճանի և սակավ կարողություններ ունենալու պատճառով: Հետևաբար, պետք է կիրառել ԽԿԳ-ը՝ որպեսզի նախապատրաստման, կանխարգելման և զարգացման գործողությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություն ստանալ՝ ավելի արդյունավետ որոշումներ կայացնելու համար:

Ավելի մանրամասն տեղեկություն ԽԿԳ մասին կարող եք գտնել www.arnap.am էլ. կայքում:

7.5 ԱՂԵՏՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ

Վերջին տասնամյակում աշխարհում տարածում գտավ աղետներին արձաքանքելու նպատակով համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) հիմնումը, ինչը արդարացվեց և ցույց տվեց իր արդյունավետությունը տարբեր երկրներում, հատկապես մեծամասշտաբ աղետների ժամանակ, երբ տեղի փրկարարներին միացած կամավորական թիմերը մեծ աշխատանքներ տարան և զգալիորեն աջակցեցին պետական կառույցներին այդ դժվար պահերին: Ըստ միջազգային վիճակագրության, մեծամասշտաբ աղետների ժամանակ փրկարարները կարողանում են փրկել տուժածների փոքրամասնությանը, իսկ մեծամասնությունը օգնում են իրենք իրենց, և փրկվում են ճիշտ գործողություններ կատարելու շնորհիվ: Փրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ աղետից հետո որքան ժամանակ է անցնում, այնքան նվազում է տուժածներին փրկելու հավանականությունը: Հետևաբար, ՀԿԹ-երը անփոխարինելի դեր կարող են ունենալ աղետների դեպքում համայնքներում փրկարարական աշխատանքների կազմակերպման գործում, հատկապես այն դեպքերում, երբ փրկարարների թիվն ու ռեսուրսները խիստ սահմանափակ են: Նման թիմերի հիմնումն իրականում լուրջ կարողություն է հանդիսանում ցանկացած համայնքի և/կամ երկրի համար: Հետևելով տարբեր երկրների լավագույն փորձին՝ ՀԿԹ իրականացվող ԱՌՆ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում նման թիմեր հիմնեցին ՀՀ Շիրակի մարզի 14 գյուղական համայնքներում:



ՀԿԽԸ կողմից իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում հիմնված ՀԿԹ-երի գործունեության շարունակականությունն ապահովելու նպատակով, ՀԿԽԸ-ն խրախուսեց համայնքներին սամակով դիմել Շիրակի ՓԾ-ին, որպեսզի ստեղծված ՀԿԹ-երը՝ նրանց տրամադրված գույքը և մնացած այլ տեղեկությունները հաշվի առնեն և գրանցեն ՓԾ բազայում: Այսօր, բացի այն, որ թիմերի ցուցակները փակցված են ՓԾ համապատասխան բաժնում, ՀԿԹ-երը նաև ներգրավվում են ՓԾ կողմից իրականացվող տարեկան վարժանքներում և այլ միջոցառումներում: Օրինակ՝ Մեծ Սեպասարի ՀԿԹ-ն մասնակցեց ՓԾ 2013թ-ի պլանային հրամանաշտաբային ուսումնական վարժանքին: Թիմերի ակտիվությունը և արդյունավետությունը ապահովելու համար պետք է նրանց ներգրավել տարբեր համապատասխան միջոցառումներում:

Թիմերի անդամների ընտրությունը պետք է կատարել արդեն իրականացված ԽԿԳ-ի հիման վրա: Ակտիվ թիմ ձևավորելու համար թիմում ներառեք ԽԿԳ ժամանակ համայնքներում բացահայտված ակտիվ անհատներին, որոնք ցանկանում են լինել իրենց համայնքում ստեղծվող թիմի անդամ: Թիմերի անդամների ընտրությունը պետք է կատարել ըստ նախապես մշակված չափորոշիչների՝ (տե՛ս հավելված 1-ը) փորձելով

ներգրավել մարդիկ համայնքի տարբեր կառույցներից (համայնքապետարան, դպրոց, մանկապարտեզ, բուժ. հաստատություն և այլն):

Որպեսզի ստեղծված ՀԿԹ-երը լինեն կայուն և ունակ տարբեր փրկարարական և ռիսկերի նվազեցման աշխատանքների կատարմանը, նրանց համար կազմակերպվեցին դասընթացներ՝

- Աղետների ռիսկի կառավարում,
- Կարմի Խաչի և Կարմի Մահիկի շարժում,
- Սոցիալ-հոգեբանական աջակցություն,
- Կենսապայմանների պաշտպանություն,
- Առաջին օգնության ցուցաբերում (տեսական և գործնական),
- Փրկարարություն (տեսական և գործնական),
- Կլիմայի փոփոխություն,
- ԿԽԿՄ միջազգային ֆեդերացիայի աղետներին արձագանքման գործիքներ,
- Հաղորդակցություն և կապ:

Սակայն միայն դասընթացները բավարար չեն լիարժեք թիմերի ստեղծման համար. խորհուրդ է տրվում կազմակերպել նաև ուսումնական վարժանքներ, որպեսզի թիմերի անդամները իրենց նոր գիտելիքները կարողանան կիրառել գործնականում և որոշակի փորձ ձեռք բերեն: ՀԿԹ-երի փրկարարական աշխատանքների բազմազանությունը և օպերատիվությունը ապահովելու համար հնարավոր է այն բաժանել խմբերի: Օրինակ՝ ՀԿԽԸ կողմից ձևավորված թիմերը կազմված են փրկարարության և առաջին օգնության, կենսապահովման, գնահատման, նախապատրաստման և կանխարգելման, տեխնիկական (տե՛ս հավելված



Մեծ Սեպասարի ՀԿԹ մասնակցությունը 2013թ. -ին Շիրակի մարզային ՓԾ կողմից կազմակերպված հրամանաշտաբային ուսումնական վարժանքին:



ՀԿԽԸ ԱՌՆ ծրագրի շրջանակներում 2013թ հուլիսին կազմակերպված մրցույթ Առափի համայնքում, ծրագրի շրջանակներում ձևավորված բոլոր 14 ՀԿԹ երի մասնակցությամբ:

2-ը) խմբերից: Իսկ ՀԿԹ-երի արձագանքման գործողությունների արդյունավետությունն ապահովելու նպատակով, թիմերը պետք է համալրված լինեն հատուկ փրկարարության համար նախատեսված գույքով (ամբողջական ցուցակը տե՛ս հավելված 3-ում) և անհատական հանդերձանքով: Թիմի անդամներին խրախուսելու համար ՀԿԹ-երի միջև կարելի է կազմակերպել մրցույթներ և այլ նմանատիպ գործնական միջոցառումներ:

ՀԿԹ-երի հիմնումից հետո հիմնական խնդիրը թիմերի գործունեության շարունակականության ապահովումն է, որի համար առաջարկվում են տարբեր գործողություններ, և համայնքապետարանն ունի իր կարևորագույն դերն այս գործում: Օրինակ՝ թիմերին ներգրավել համայնքային տարբեր պլաններում, և իրականացվող բարեփոխումների ժամանակ հաշվի առնել թիմի անդամների կարծիքը, դիրքորոշումը և այլն, իսկ հնարավորության դեպքում

համայնքային բյուջեից գումարներ տրամադրել ՀԿԹ –ի զարգացմանը և պահպանմանը:

7.6 ԱՂԵՏՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Ցանկացած ծրագրի արդյունավետ իրականացման գրավականը ժամանակին և ճիշտ պլանավորումն է: Հաշվի առնելով ԱՌՆ ոլորտի գործողությունների բազմազանությունը՝ առավել կարևոր և պարտադիր է դառնում պլանավորման գործընթացը: Պլանները կարելի է դասակարգել ըստ իրականացվող գործառնությունների, օրինակ՝ զարգացման, ԱԻ արձագանքման, տարիանման և այլն, և տարածքների, օրինակ՝ մարզային, համայնքային և այլն: Բոլոր դեպքերում պլանները օգնում են տարբեր արտակարգ իրավիճակներում՝ գործողությունների օպերատիվ, համակարգված և հաջորդական իրականացմանը: Հասկանալով պլանավորման օգտակարությունն ու անհրաժեշտությունը՝ ՀԿԽԸ-ը իրականացվող ծրագրի շրջանակներում աջակցեց ծրագրի շահառու 14 համայնքների ՀԿԹ-երին, որպեսզի նրանք կազմեն իրենց համայնքներում աղետներին նախապատրաստման և կանխարգելման (ԱՆԿ) գործողությունների պլան (Գործողությունների պլան) (տե՛ս հավելված 4-ում), որի հիմքում ընկած է ԽԿԳ ժամանակ հավաքագրված կարծիքները, մտքերը, նկատառումները և այլ տեղեկատվություն: ԱՆԿ գործողությունների պլանը կարևոր է ինչպես ՀԿԹ-երի աշխատանքները ավելի մասնագիտական և համակարգված կերպով կազմակերպելու, այնպես էլ համագործակցության ամրապնդման համար: Գործողությունների պլանը կազմված է հետևյալ երեք խմբից՝

1. ռիսկերի գնահատման և վերլուծության,
2. նախապատրաստման,
3. կանխարգելման գործողություններից և հետևյալ՝
 1. առաջարկվող գործողության ժամանակացույցի,
 2. տվյալ գործողության իրականացման պատասխանատուի,
 3. գործողությունների իրականացման համար հնարավոր գործընկերների ներգրավման սյունակներից, որի նպատակն է ապահովել պլանի իրականացման

արդյունավետությունը և մատչելիությունը: Գործողությունների պլանը, պատշաճ հետևողականության և համայնքի գործունեության տարբեր մակարդակներում ինտեգրման արդյունքում, զգալի ներդրում կլինի նաև համայնքի կայուն զարգացման գործում: Հաշվի առնելով աղետների դրսևորման տարբեր ձևերը՝ գործողությունների պլանում հիմնականում հարկավոր է ներառել այնպիսի առաջարկներ, որոնց համայնքներն ի զորու են արձագանքել իրենց և մարզային կարողությունների ներգրավմամբ և որոնք չեն ներառում բարձր տեխնոլոգիական և ինժինեռատեխնիկական միջամտություն, որոնց համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության աջակցությունը: Առաջարկներում պետք է ներառել գործողություններ, որոնք ծավալուն կերպով իրականացնելու համար համայնքները միգուցե չունեն համապատասխան միջոցներ, սակայն, խրախուսվում են հայթայթել դրանք տեղական և միջազգային գործընկեր կազմակերպություններից: ՀԿԽԸ կողմից առաջարկվող գործողություններում տեղ են գտել նաև այնպիսի հիմնական և կարևոր գործողություններ, որոնք մշտական և անփոխարինելի դեր ունեն համայնքի՝ աղետներից պաշտպանվելու գործում:

7.7 ԻՐԱԶԵԿՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ԱՌՆ ոլորտում իրականացվող միջոցառումներից շատերը ուղղված են բնակչության իրազեկման բարձրացմանը, որոնք կարելի է դասակարգել ըստ հիմնական 4 մոտեցումների՝

- ուսումնական արշավներ,
- ուսուցման մասնակցային մեթոդ,
- ոչ ֆորմալ ուսուցում,
- ֆորմալ ուսուցում (ուսումնական ծրագրերում հաստատված թեմաներ):

Իրազեկման գործողությունները հիմնականում առաջարկվում է իրականացնել ուսումնական հաստատությունների՝ մասնավորապես դպրոցների միջոցով: Իրազեկման գործընթացում կիրառվում են տարբեր գործիքներ՝ տպագիր նյութեր, ուսուցողական խաղեր և մրցույթներ, ներկայացումներ, ֆիլմեր, ձեռնարկներ և այլն: Այս գործընթացի հատուկ գործիքներից մեկը, որը կիրառվեց ՀԿԽԸ կողմից ԱՌՆ ծրագրի շրջանակներում՝ «Աղետի ընտանեկան պլան» (ԱԸՊ) մրցույթն էր: «Աղետի

ընտանեկան պլան» մրցույթի իմաստը կայանում է նրանում, որ ծրագրի շահառու դպրոցների աշակերտները, օգտագործելով նախապես իրենց տրամադրված ԱԸՊ ուղեցույցը, մշակեն և ընտանիքի անդամների հետ միասին կազմեն իրենց ընտանեկան պլանը:

Իրազեկման ծրագրերը հաջողվածներից են համարվում, երբ տեղեկատվություն ստացողները սկսում են կիրառել իրենց նոր գիտելիքները և որևէ ԱՌՆ ուղղված գործողություն իրականացնում: ՀԿԽԸ կողմից իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում կազմակերպված ԱԸՊ մրցույթի մասնակիցներից շատերը նույնիսկ տեղափոխություններ էին կատարել իրենց տներում: Օրինակ՝ աշակերտներից շատերը մահճակալը պատուհանի տակից տեղափոխել էին կրող պատի տակ, մյուսները տանը մահճակալի վերևում կախված ծանր առարկաներն էին (ծանր շրջանակով նկար) տեղափոխել: Արթիկի թիվ 2 դպրոցում ուսուցիչները և աշակերտները ձեռնամուխ էին եղել դպրոցին կից գտնվող սելավատարի մաքրմանը և, մոբիլիզացնելով նույնիսկ աշակերտների ծնողներին, հաջողությամբ իրականացրել էին իրենց առջև դրված խնդիրը:

ԱՌՆ ոլորտում արդյունքներ գրանցել առանց հասարակության գիտակցության փոփոխության շատ դժվար է, իսկ հակառակ դեպքում, երբ մարդիկ հասկանում են ԱՌՆ կարևորությունը, արդյունքները գրանցվում են առանց ջանքերի: Իրազեկման գործողությունները կարող են վերաբերվել

- աղետներից պաշտպանվելու վարքականոններին,
- ԱՌՆ հիմունքներին,
- Տարահանմանը,
- հրդեհային անվտանգությանը և այլ թեմաների:

Հաշվի առնելով դպրոցներում իրազեկման բարձրացման և ճիշտ տարահանման կազմակերպման խնդիրները՝ ՀԿԽԸ կողմից իրականացվող ԱՌՆ ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի 80 դպրոցներում վերանայվեցին առկա տարահանման սխեմաները և



հաշվարկվեցին, թե յուրաքանչյուր դպրոցի համար քանի տարահանման նշան է անհրաժեշտ: Հաշվարկներից և ճշգրտումներից հետո ՀԿԽԸ-ը բոլոր դպրոցներին տրամադրեց համապատասխան քանակի տարահանման նշաններ, այնուհետև դրանք փակցվեցին դպրոցներում և հոկտեմբերի 13 - ին (ԱՌՆ միջազգային օր) նվիրված բոլոր դպրոցներում իրականացվեցին ուսումնական տարահանումներ:

7.8 ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հիմնականում կանխարգելման գործողությունները ԱՌՆ ծրագրերում համարվում են որպես գործողությունների վերջին փուլում իրականացվող գործընթաց: Կանխարգելման ծրագրերը հնարավոր է իրականացնել գնահատման և համապատասխան նախապատրաստական աշխատանքների իրականացումից հետո: Կանխարգելման գործողություններն ուղղված են արտակարգ իրավիճակ առաջացնող գործոնների կանխորոշմանն ու նվազեցմանը և/կամ վերացմանը: Յուրաքանչյուր աղետի ռիսկի նվազեցման համար կան համապատասխան միջոցառումներ, որոնց վերլուծության և ընտրության համար անհրաժեշտ է օգտագործել ԽԿԳ ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը: Կանխարգելման միջոցառումներ կարող են հանդիսանալ՝

- վարարումների ժամանակ ջրհեղեղների առաջացումը կանխելու համար՝ գետերի հունների մաքրման և խորացման աշխատանքները, ափապաշտպան գաբիոնների և հենապատերի կառուցումը,
 - կարկուտներից հասցված վնասների նվազեցման համար՝ հակակարկտակայանների և/կամ հակակարկտային ցանցերի կիրառում և այլն:
- Օրինակ՝ ԱՌՆ ծրագիրը, որն իրականացվում է Շիրակի մարզի 14 գյուղական համայնքներում, որտեղ, ըստ ծրագրի գործողությունների հաջորդականության, իրականացվեց խոցելիության և կարողությունների գնահատում, որի արդյունքում պարզաբանվեց շահառու համայնքներին սպառնացող հիմնական վտանգները և դրանցից բխող բացասական հետևանքները: Այդ խնդիրներից առանձնացվեց մեկը՝ աղբահանության համակարգի բացակայությունը, որի հետևանքով համայնքի տարբեր վայրերում, հատկապես սելավատարերում, գետերի հուններում, ձորակներում, կամուրջների տակ և այլն, բավականին մեծ քանակությամբ աղբակույտեր էին հավաքվում, որն էլ պատճառ էր՝
- հակասանիտարահիգիենիկ միջավայրի,
 - գետերում և սելավատարերում խցանումների և հետևաբար սելավների առաջացման,
 - համաճարակների առաջացման,
 - աղբահանման ամենամյա մեծ ծախսերի,
 - սելավատարերի մաքրման ծախսերի,
 - շրջակա միջավայրի աղտոտման և այլն:
- Չնայած մաքրման աշխատանքներին ուղղված ՏԻՄ ջանքերին և կատարած ամենամյա ծախսերին՝ խնդիրը շարունակում էր մնալ չլուծված: Այսպիսով՝ գործելով ԱՌՆ շրջանակներում և իրականացնելով համապատասխան գործառույթներ՝ գնահատում, իրավիճակի վերլուծություն, պլանավորում, համաձայնությունների ձեռք բերում, ռեսուրսների հստակեցում և այլն, որոշվեց խնդիրը լուծել հետևյալ կերպ.
- նախ՝ ՀԿԽԸ-ն աջակցեց համայնքապետարաններին կազմակերպել աղբի մաքրման և տարածքների բարեկարգման աշխատանքներ, որը իրականացվեց համայնքի բնակչության ներգրավմամբ,
 - այնուհետև՝ համայնքներում տեղադրվեցին ՀԿԽԸ կողմից տրամադրված բավարար



Պեմզաշեն համայնքում կանխարգելման (Աղբահանության) ծրագիրը իրականացնելուց:

քանակի աղբամաններ, որպեսզի բնակիչները աղբը թափեն դրանց մեջ, և վերջում՝ համայնքը մոտակա քաղաքի աղբահանության ծառայության հետ կնքեց պայմանագիր՝ համայնքում պարբերաբար աղբահանության իրականացման համար:



Նոր Կյանք համայնքում կանխարգելման (Աղբահանության) ծրագիրը իրականացնելուց:

ԱՌՆ ծրագրի այս գործողության արդյունքում համայնքապետարանը հնարավորություն կունենա հավաքագրել չնչին գումար յուրաքանչյուր ընտանիքից՝ աղբահանման ծառայության դիմաց վճարելու համար, իսկ նախկինում աղբահանությանը, սելավատարերի մաքրմանը և շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ամենամյա ծախսերը հնարավոր է ուղղել համայնքի զարգացման այլ ոլորտներին: Նմանատիպ ծրագրերը հնարավորություն են

ընձեռում տարբեր խնդիրներին տալ երկարատև լուծում՝ միաժամանակ դրական ազդեցություն ունենալով մի քանի այլ ոլորտների վրա: Կատարելով վերլուծություն՝ ավելի ընկալելի է դառնում ԱՌՆ արդյունավետությունը և կարևորությունը բոլոր մակարդակներում, իսկ ժամանակի ընթացքում ավելի ակնհայտ կլինեն ԱՌՆ ծրագրերի արդյունքները:

Կանխարգելիչ միջոցառումների բարձր արդյունավետությունն ապահովելու համար հարկավոր է կիրառել գոյություն ունեցող միջազգային փորձը, ապահովել մասնագետների անմիջական ներկայությունն ու վերահսկումը, անվտանգության ապահովման կանոններն ու նորմերը: Շատ դեպքերում կանխարգելման գործողությունները պահանջում են մեծ ներդրումներ և բարձր տեխնիկական միջամտություն: Ելնելով այս հանգամանքից՝ պետք է գիտակցել, որ համայնքներում առաջացած խնդիրների լուծմանն ուղղված կանխարգելման միջոցառումները միայն համայնքապետի ուժերով հնարավոր չէ իրականացնել, պետք է ավելի համախմբված և ավելի մասնագիտական մոտեցում ցուցաբերել: Կանխարգելման ծրագրերում կարող են մասնակցություն ունենալ՝

- ՀՀ կառավարությունը
- Մարզպետարանը
- Մարզային ՓԾ-ն
- Համայնքապետարանը
- ԱՌՆ ծրագրեր իրականացնող կազմակերպություններ
- ՀԿԹ-ը
- Համայնքի բնակիչները
- և այլն:

Բոլոր դեպքերում, կանխարգելման արդյունավետ ծրագրերի իրականացման համար հարկավոր է միասնական և համախմբված մոտեցում ցուցաբերել:

8.

ԱՌՆ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ

ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

ԱՌՆ ոլորտում չափազանց կարևոր է

գործողությունների շարունակականությունը, բախի որ դրանց շարունակականության խափանման դեպքում, վաղ թե ուշ կառաջանան նոր խնդիրներ, ի հայտ կգան նոր ռիսկեր և մենք ստիպված կլինենք սկսել ամբողջ գործողությունների շղթան սկզբից: Ելնելով վերոնշյալ հանգամանքից՝ անհրաժեշտ է փորձել ԱՌՆ գործողությունները ինտեգրել համայնքային զարգացման հնարավոր բոլոր ոլորտներում:

8.1 ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԿԹ-ԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԻՐ ԶԱՄԱԿԱՐԳԻՆ

Հատկանշական է մարզային ՓԾ աշակցությունը թիմերի շարունակականության հարցում, և այդ պատճառով ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողություններին մշտապես ապահովվել է ՓԾ ներկայացուցիչների մասնակցությունը: ՅԿԹ անդամներից յուրաքանչյուրը պատրաստված է և կարող է փրկարարական գործողություններ իրականացնել ԱԻ ծագման դեպքում, անհրաժեշտության դեպքում թիմի ղեկավարը կարող է համակարգել տարվող աշխատանքները: Մեծամասշտաբ աղետների դեպքում բոլոր թիմերի համակարգման գործընթացն իրականացվում է մարզային ՓԾ կողմից: ՓԾ-ն, հանդիսանալով մարզում իրականացվող փրկարարական և ԱՌՆ աշխատանքների համակարգողը, ՅԿԹ-երին իր համակարգին ինտեգրելու նպատակով իրականացրել է միջառք գործողություններ, որոնք պետք է նպաստեն նաև թիմի գործունեության շարունակականությանը: Իր համակարգին ինտեգրմանն ուղղված առաջին գործողությունը եղավ ՅԿԹ կազմի և ստացած տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկատվության գրանցումը ՓԾ տվյալների բազայում, այնուհետև մարզային ԱԻ արձագանքման պլաններում: Մեծ Սեպասարի ՅԿԹ-ը մասնակցեց ՓԾ ամենամյա հրամանաշտաբային վարժանքին և արդարացրեց բոլորի սպասումները՝ իրականացնելով տեղանքի առաջնային զննություն, տուժածների հայտնաբերում և այլ փրկարարական աշխատանքներ: ՅԿԻԸ կազմակերպեց այցելություններ հրշեջ կայաններ, որպեսզի թիմի անդամները ծանոթ լինեն մարզային ՓԾ կազմում գտնվող հրշեջ փրկարարների աշխատանքին և

փրկարարական գույքին: Այժմ բոլոր 14 ՅԿԹ ցուցակները փակցված են Շիրակի մարզային ՓԾ օպերատիվ արձագանքման բաժնում և ցանկացած պահի ՓԾ-ը կարող է կապ հաստատել թիմի ղեկավարի և/կամ նրա բացակայության ժամանակ թիմի այլ անդամների հետ և, հարկ եղած դեպքում, նրանց ներգավվել անհետաձգելի փրկարարական և/կամ այլ համապատասխան աշխատանքներում: Հարկ է նշել, որ ՅԿԹ-երին ՓԾ համակարգին ինտեգրման թվարկված գործողություններն ունեն իրենց դրական ազդեցությունը, և միգուցե հնարավոր չէ կարճ ժամանակում համոզվել ԱՌՆ ծրագրի արդյունքում ձևավորված ՅԿԹ-երի արդյունավետության և կարևորության մեջ, սակայն ժամանակի ընթացքում ավելի ակնհայտ և ընգծված է դառնում նրանց դերը ՓԾ կարողությունների շարքում:

9. ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՇ ԴԱՍԵՐ

Մի շարք օրինակներ կան, որոնք կարելի է դիտարկել որպես ծրագրի ընթացքում տեղի ունեցած լավագույն փորձ: Նախ Մեծ Սեպասար ՅԿԹ-ի ներգրավումը Շիրակի մարզային ՓԾ հրամանաշտաբային ուսումնական վարժանքին, որտեղ թիմը ըստ վարժանքի սցենարի, առաջինը ժամանեց աղետի վայր, իրականացրեց տարածքի զննում, հայտնաբերեց և առաջին օգնություն տրամադրեց տուժածներին և փրկարարների ժամանումից հետո համատեղ իրականացրեց փրկարարական աշխատանքներ: Բացի այդ, հետաքրքիր էր այն փաստը, որ ծրագրի թիրախային դպրոցների համար կազմակերպված միջոցառմանը, առանց հրավերի, մասնակցելու ցանկություն էին հայտնել ևս 17 նոր դպրոցների ներկայացուցիչներ և եկել էին հանդիպմանը: Այսինքն՝ ծրագրում ընգրկվելու նրանց ցանկությունը ընդգծում է ծրագրի կարևորությունը և արդյունավետությունը: Եղել են դեպքեր, երբ աշակերտները, ստանալով գիտելիքներ և հասկանալով ԱՌՆ կարևորությունը, փորձել են գործնական քայլեր ձեռնարկել: Նման օրինակ տեղի

ունեցավ Արթիկի միջնակարգ դպրոցում, երբ ուսուցիչները և աշակերտները իրենց ծնողների հետ միասին մաքրեցին դպրոցի տարածքում գտնվող ջրատարը, որը երկար տարիներ չէր մաքրվել և առատ տեղումների և/կամ ձնհալի ժամանակ վտանգում էր դպրոցի հարակից տարածքը:

Շիրակի մարզի Փանիկ համայնքում գրանցվել է երկու հրդեհի դեպք, որտեղ ՅԿԹ-ը ունեցել է մասնակցություն: Այս երկու դեպքերը հանդիսանում են որպես Ծրագրի լավագույն փորձ: Նախ թիմին հաջողվեց մոբիլիզացնել իր կարողությունները և արձագանքել արտակարգ իրավիճակին՝ դրանով իսկ խնայելով ՅՓՁ-ի ժամանակը և ռեսուրսները: Երկրորդը, կապ հաստատվեց Համայնքային թիմի և ՅՓՁ միջև, նրանց համագործակցությունը և ցանցը ընդլայնվեց, իսկ թիմերը ճանաչվեցին մարզային իշխանությունների կողմից որպես ռեսուրս՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար: Երրորդը, որպես արդյունք, ծրագիրը շոշափելի ազդեցություն ունեցավ համայնքներում կենսապահովման միջոցների պաշտպանության վրա, քանի որ երկու դեպքում էլ ճիշտ գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել կորուստից:


Շատ դեպքերում դժվար է պատկերացնել, որ երբ մի բան, որն ընդհանրապես չի պլանավորվել, տեղի է ունենում զուգադիպությամբ: Այս առումով հարկ է նշել Մեծ Սեպասար Համայնքային թիմի դեպքը, որը տեղի ունեցավ Շիրակի մարզի 14 Համայնքային կամավորական թիմերի մրցումից հետո իրենց համայնք վերադառնալու ճանապարհին: Երկու մեքենա՝ երթուղային տաքսի և սեդան, իրար էին բախվել, որի արդյունքում դրանցից մեկը շրջվել էր: ՅԿԹ անդամները, հասնելով դեպքի վայր, անմիջապես սկսեցին փրկարարական աշխատանքները՝ հոսանքազրկելով մեքենաները հրդեհից խուսափելու և անջատելով գազի մատակարարումը՝ պայթյունից խուսափելու համար, ցուցաբերեցին առաջին օգնություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն վթարից տուժած 6 ուղևորներին: Այս դեպքում Համայնքային թիմերը արհեստավարժորեն արձագանքեցին այդ արտակարգ իրավիճակին, օգտագործելով դասընթացների և վարժանքների ընթացքում ստացած գիտելիքը ու փորձը, ինչը վկայում է ՅԿԹ օժանդակ դերի՝ մարզային մակարդակում արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով Համայնքային թիմերին

ներգրավվելու ճիշտ որոշման մասին:

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

10.1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Համայնքներում ԱՌՆ ոլորտի գործառույթների իրականացման ակտիվությունը և աղետներից վնասների չափերի նվազեցումը հատկանշական դեր կարող է ունենալ համայնքի կայուն զարգացման գործում:



Արմեն Պետոյան՝ Փանիկի ՅԿԹ անդամ:
 Ծրագրի սկզբում ՅԿԽԸ կողմից իրականացվող դասընթացներին մասնակցելիս մտածում էի, որ դժվար թե այդ գիտելիքները ինձ պիտանի լինեն, սակայն 2013 թվականին մեր համայնքում տեղի ունեցած հրդեհներից հետո, երբ մենք թիմի անդամներով կարողացանք այրվելուց փրկել ցորենի դաշտերը, ես հասկացա ծրագրի կարևորությունը և խնդրանքով դիմեցի ՅԿԽԸ անդամներին՝ մեր թիմը հրդեհաշիջման գույքով համալրելու և նոր դասընթացներ ու վարժանքներ կազմակերպելու նպատակով:

Տարբեր ուսումնասիրությունների և մասնավորապես ՅԿԽԸ կողմից իրականացված

ԽԿԳ-ների արդյունքների հիման վրա կարելի է առանձնացնել մի քանի հիմնական խորհուրդներ՝ ուղղված համայնքերում ԱՌՆ ակտիվացմանը.

- Ակտիվացնել համագործակցությունը ԱՌՆ ոլորտում գործող բոլոր կառույցների հետ, օրինակ՝ մարզպետարանի, ԱԻՆ ՄՓԾ, ԱԻՆ «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի, մարզում առկա ՀԿԹ-երի, ՀԿ-ների և այլն:
- Համայնքում պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքի բնակիչների, ՀԿԹ և այլ հավանական գործընկերների հետ՝ առկա խնդիրները պարզաբանելու, լուծումները և դրանց առաջնայնությունները սահմանելու համար:
- ԱՌՆ ներառել համայնքային տարբեր պլաններում և հաշվի առնել ԱՌՆ բյուջեների կազմման և հաստատման ժամանակ:
- ԱՌՆ պետք է ընկած լինի կրթական, առողջապահության, քաղաքաշինության, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում իրականացվող ծրագրերի և/կամ նախաձեռնությունների հիմքում:
- ԱՌՆ գնահատման փուլում կարողությունների և խոցելիության բաղադրիչները պետք է լրացնել առավելագույնս իրատեսական: Հաճախ ինչ-ինչ պատճառներով կամ գերազնահատվում, կամ թերազնահատվում են դրանք: Սա վտանգում է ճշգրիտ գնահատումը, հետևապես ԱՌՆ ողջ գործընթացը դառնում է ոչ իրատեսական:
- ԱՌՆ լուծումների առաջարկները պետք է համապատասխանեն համայնքի հնարավորություններին:

10.2 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԹԻՄԵՐԻՆ


Համայնքային կամավորական թիմերը աղետներին արձագանքման ժամանակ կարող են զգալի աջակցություն ցուցաբերել համայնքներում իրականացվող փրկարարական աշխատանքներին, սակայն դրանք կարող են նաև դրական մեծ ազդեցություն ունենալ խաղաղ պայմաններում համայնքի զարգացման և անվտանգության գործում:

- Ձևավորված թիմերը պետք է ներգրավվեն համայնքներում որոշումների ընդունմանը և աջակցեն համայնքային իշխանություններին

ԱՌՆ գործընթացում:

- Թիմերի անդամները պետք է իրենց գիտելիքները փոխանցեն մյուսներին և աջակցեն համայնքում ԱՌՆ մշակույթի զարգացմանն ու պահպանմանը:
- Թիմերի անդամները պետք է շարունակեն ԱՌՆ վերաբերյալ գիտելիքներ և տեղեկություններ ստանալու և դրանք ուսումնական վարժանքներում փորձարկելու գործընթացը:
- Թիմերի անդամները պետք է մշտապես զբաղվեն թիմերը նոր անդամներով համալրելու գործով:
- Թիմերի անդամները պետք է փորձեն ներգրավվել համայնքներում իրականացվող տարբեր ծրագրերին և աջակցել դրանց արդյունավետ անցկացմանը:
- Թիմերը պետք է սերտ համագործակցեն մարզային ՓԾ և նրա հրշեջ կայանների հետ թե՛ ԱՌՆ հիմնահարցերի, թե՛ ԱԻ արձագանքման գործում:
- Թիմերը պետք է զարգացնեն իրենց համագործակցությունը ՏԻՄ-երի, ՀԿԹ-ների, ՀԿ-ների և այլ կառույցների հետ:

10.3 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՌՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ



Նոր Կյանք համայնքի և ՀԿԹ-ի ղեկավար ՀԿԻՆԸ ներկայացուցիչների լուրջ և պատասխանատու մոտեցումը ծրագրի իրականացման յուրաքանչյուր հարցի շուրջ մեզ ստիպեց, որ ինքներս էլ նման կերպ վերաբերվենք ծրագրին:

- Համայնքներում ԱՌՆ ծրագրեր իրականացնողները պետք է ծրագրերի իրականացմանը վերաբերվեն չափազանց պատասխանատվությամբ, քանի որ դրանից է առաջին հերթին կախված ծրագրի շահառուների հետագա վերաբերմունքը և մոտեցումը:
- Համայնքներում ԱՌՆ ծրագրեր իրականացնողները պետք է անսպախման համայնքի բնակիչների և համայնքապետարանի կարծիքը հաշվի առնեն իրականացվող ծրագրերում:
- Համայնքներում ԱՌՆ ծրագրեր իրականացնող կազմակերպություններին խորհուրդ է տրվում հաշվի առնել այլ ՀԿ ներքին իրականացրած նմանատիպ ծրագրերի փորձը:
- Համայնքներին սպառնացող հնարավոր ռիսկերի բացահայտման համար պարտադիր է ԽԿԳ կիրառվող առնվազն 8 գործիքների օգտագործումը՝ նշված 7.4 կետում:
- Ապահովել բնակչության առնվազն 8 տոկոսի մասնակցությունը խնդիրների բացահայտման և լուծումների առաջարկման գործընթացին:
- Գործընթացին մասնակից դարձնել մարզային ԱՌՆ թիմը, կամ ԱԻՆ մարզային ՓԾ-ն:

11.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ՀԿԹ անդամների ընտրության չափորոշիչներ

Չափորոշիչները մշակվել է ՀԿԻՏԸ ԱԿ/ԲՏ բաժնի կողմից՝ ՀԿԹ անդամների ընտրության գործընթացը ճիշտ կազմակերպելու նպատակով և գործնականում ապացուցել իր արդյունավետությունը:

1. Տարիք – 18 և ավելի,
2. Սեռ (ցանկալի է թիմում ընդգրկել առնվազն 40% կանանց),
3. Առողջական վիճակ (փրկարարական աշխատանքներում ընդգրկվելու հնարավորություն)
4. Կամավոր աշխատանքներ կատարելու ցանկություն,
5. Պարտաճանաչություն (մասնակցություն տարբեր միջոցառումներին)
6. Մասնագիտական փորձ,
7. Աշխատանքային փորձ (կազմակերպություն, պաշտոն, պարտականություններ),
8. Ներկայիս զբաղվածություն (ցանկալի է զինղեկ, հրշեջ, բուժ աշխատող, ուսուցիչ և այլն),
9. Աղետների կառավարման դասընթացներին և վարժանքներին մասնակցության փորձ,
10. Նախկինում աղետներին արձագանքման գործողություններում ներգրավվածության փորձ,
11. Հաղորդակցության և համագործակցության հմտություն,
12. Թիմային աշխատանքներում ընդգրկվելու փորձ,
13. Հասարակական աշխատանքներում ընդգրկվելու փորձ,
14. Համայնքային և ոչ անձնական շահերից բխող մտածողության դրսևորում,
15. Հասարակության կողմից հարգանքի և վստահության վայելում:

Վերոնշյալ ցուցիչների հիման վրա ձևավորված կամավորական թիմերը կլինեն առավել համայնքակենտրոն, արդյունավետ և հարատև և միևնույն ժամանակ կնվազեցնեն որոշումների և գործողությունների անձնավորված մոտեցումը՝ առաջ մղելով թիմային մտածողության և աշխատանքի գաղափարը:

Հավելված 2. ՀԿԹ կառուցվածքը:

Արեգևադեմի Համայնքային կամավորական թիմի ղեկավար՝ Աղունիկ Հագրյան

	Համայնքային թիմի խմբի անվանումը	Խմբի պատասխանատու	Խմբի անդամներ	Հեռախոս
1	Փրկարարության և առաջին օգնության խումբ	Նարինե Մկրտչյան 077-42-88-89	1. Նարինե Մկրտչյան 2. Էդիկ Մանուկյան 3. Անժելա Սիմոնյան 4. Լուսինե Սիմոնյան 5. Անդրանիկ Ծառուկյան 6. Հարություն Մինասյան	077-42-88-89 077-00-99-91 094-86-31-43 094-86-31-43 093-66-88-38 077-64-67-69
2	Կենսապահովման խումբ	Վարդուի Մկրտչյան 094-92-59-16	1. Վարդուի Մկրտչյան 2. Ցողիկ Խաչատրյան 3. Հռիփսիկ Ծառուկյան	094-92-59-16 098-79-53-22 094-32-15-36
3	Գնահատման խումբ	Աղունիկ Հագրյան 077-58-83-55	1. Աղունիկ Հագրյան 2. Վիկտոր Մովսիսյան 3. Ահարոն Երեմյան	077-58-83-55 098-55-21-03 077-33-26-55
4	Նախապատրաստման և կանխարգելման խումբ	Սամվել Տոնոյան 094-91-63-07	1. Սամվել Տոնոյան 2. Լուսինե Վարդանյան 3. Հրայր Ծառուկյան 4. Զրիստինե Սարգսյան 5. Արփինե Ծառուկյան	094-91-63-07 094-86-31-43 098-79-55-20 077-34-72-20 098-79-55-20
5	Տեխնիկական խումբ	Աշոտ Պողոսյան 094-69-66-26	1. Աշոտ Պողոսյան 2. Էդգար Առաքելյան 3. Սամվել Ծառուկյան	094-69-66-26 098-78-07-12 094-32-15-36

Թիմում խմբեր ձևավորելու նպատակն է ԱԻ ժամանակ տարբեր փրկարարական աշխատանքների արագ և արդյունավետ իրականացումը: Խմբերը ձևավորելիս պետք է հաշվի առնել ԱՌՆ բաղկացուցիչները և աղետների ժամանակ իրականացվող փրկարարական աշխատանքների առաջնայնությունը և կարևորությունը: ՀԿԹ կարծես փրկարարական և ԱՌՆ գործողություններ իրականացնող խմբերից կազմված թիմ լինի, որը կարող է զբաղվել՝

- ԱԻ ժամանակ փրկարարությամբ,
- խաղաղ ժամանակ ԱՌՆ տարածմամբ:

Ժամանակի ընթացքում ՀԿԹ անդամները կարող են համալրվել և փոխարինվել նոր անդամներով: ՀԿԹԸ ծրագրի շրջանակներում կազմված թիմերը բաղկացած են 20 անդամներից, սակայն դրանց թիվը կարող է ավելանալ՝ թիմի ղեկավարի պարտադիր իմացության դեպքում: Նոր անդամներ ընդգրկելուց ՀԿԹ անդամները և թիմի ղեկավարը պետք է իրենց գիտելիքները փոխանցեն նոր անդամներին և ծանոթացնեն գույքին և դրա օգտագործման կանոններին:

Հավելված 3. Թիմերի տեխնիկական հագեցվածությունը:

Յուրաքանչյուր ՀԿԹ-ին աղետների արձագանքման համար տրամադրված առաջին անհրաժեշտության տեխնիկական միջոցների ցուցակ:

Ցուցակում ներառված գույքը հնարավորություն է տալիս իրականացնել թիմի 5 խմբերի անվանումներին համապատասխան աշխատանքներ և ապահովել թիմի անդամների անվտանգությունը: Գույքի մասին տեղեկատվությունը նամակով ուղարկվել է Շիրակի մարզային ՓՇ և գրանցվել նրանց տվյալների բազայում: ՀԿԹ աշխատանքների արդյունավետության բարձրացման համար թիմերը խրախուսվում են համալրել իրենց գույքային բազան նոր գործիքներով և սարքավորումներով: Յուրաքանչյուր շահառու համայնքի համայնքապետարաններում հատկացվել են սենյակներ՝ գույքը տեղակայելու համար:

	Անվանումը	Մոդել	Չ/Մ	Քանակ
1	Սաղավարտ	«Elios, Petzl»	հատ	12
2	Կարաքին	«Locher Screw-Lock, Petzl»	հատ	12
3	Ձեռնոց	«Ամուր կտորից»	գույգ	20
4	Ութնյակ	«Classic ANOD-KONG»	հատ	1
5	Ութնյակ	«928.01 ստանդարտ – Camp»	հատ	4
6	Պարան	«Ստատիկ 10մմ, 50մ – Կոլումնա»	կապ	4
7	Դիմակ	«Եռաշերտ պաշտպանիչ դիմակ»	հատ	80
8	Լոմ	«Երկաթե, 1.3 մետր»	հատ	2
9	Կացին	«Երկաթե 0.8 մ. Երկարությանը, 2.3 կգ»	հատ	2
10	Բահ	«Սուր ծայրով»	հատ	5
11	Բարձրախոս	«ER66-Series, 12V»	հատ	2
12	Լապտեր	«Միջին չափի, մարտկոցներով»	հատ	10
13	Ժումառ	«8-13մմ, Ptezl»	հատ	4
14	Ռոլիկ զաժիմով	«ProTraxion P51, Ptezl»	հատ	1
15	Ռոլիկ	«FIXE P05 SO, Petzl»	հատ	2
16	Ռոլիկ-բլոկ	«Tandem, Petzl»	հատ	2
17	Ապահով. Համակարգ	«CORAX C51, Petzl»	հատ	4
18	Վրան	«Fox Comfort 4 V2- 4 մարդու համար»	հատ	5
19	Ծածկոց	«Բրոյա, 1.5*2 մ»	հատ	10
20	Բաճկոն		հատ	20
21	Տաքատ		հատ	20
22	Ժիլետ		հատ	20
23	Շապիկ		հատ	20
24	Ուսապարկ		հատ	20
25	ԱՕ արկեր		հատ	2

Հավելված 4. Աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլանի օրինակ:

ՌԻՍԿԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱ ՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ
Աղետների ռիսկի վերաբերյալ համայնքում կատարված ուսումնասիրությունների տվյալների հավաքագրում	Պարբերաբար և/կամ անհրաժեշտության դեպքում	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ, ՅԿ-ներ
Համայնքի քարտեզագրում և աղետավտանգ հատվածների սահմանում (կշագրում)	4 տարին 1 անգամ (տարին 1 անգամ թարմացվում է)	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար	«Գեոկոմ» ՍՊԸ, Մարզպետարան, ՄՓՎ
Աղետավտանգ գոտիների մոնիթորինգ և տեխնիկական տվյալների հավաքագրում	Տարին 2 անգամ (գարնանը և աշնանը)	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ, ՅԿ-ներ
Աղետավտանգ գոտիների մոնիթորինգի արդյունքների և հավաքագրված տեխնիկական տվյալների հիման վրա զեկույցի մշակում	Տարին 2 անգամ	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար	ՄՓՎ, ՅԿ-ներ
Մշակված զեկույցի ներկայացում մարզային իշխանություններին, ՄՓՎ և համայնքում գործող կառույցներին	Տարին 2 անգամ	Համայնքի ղեկավար	ՄՓՎ, ՅԿ-ներ
Մշակված զեկույցի ներկայացում և քննարկում համայնքում ներգրավված կազմակերպությունների ղեկավարների հետ	Տարին 2 անգամ	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար	ՄՓՎ, ՅԿ-ներ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱ ՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ
Աղետներին արձագանքման և տարահանման պլանների մշակում և/կամ պարբերաբար թարմացում	Ամեն տարի	Համայնքի ղեկավար, ավագանի, ՅԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Համաձայն վերոնշյալ պլանների՝ ուսումնական միջոցառումների (վարժանքների) անցկացում	Տարին 2 անգամ	Համայնքի ղեկավար, ՅԿԹ ղեկավար, դպրոցի տնօրեն	ՄՓՎ, դպրոց, ՅԿ-ներ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱ ՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ
Համայնքակենտրոն վաղ ազդարարման (նախազգուշացման) համակարգի ստեղծում և/կամ կատարելագործում և լուսաբանում	Մշտապես	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Անհրաժեշտ տեխնիկական և այլ ռեսուրսների պահեստավորում, պահուստային ֆոնդի ստեղծում	Պարբերաբար	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
ՀԿԹ համար դասընթացների և ուսումնական միջոցառումների անցկացում համայնքում գործող հիմնական կառույցների ներգրավմամբ (ԱԻ հիմնահարցերով)	Պարբերաբար (Տարեկան 2 անգամից ոչ պակաս)	ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՀԿ-ներ, ՄՓՎ, հրշեջ-փրկարարական ջոկատներ
Բնակիչների և երեխաների իրազեկման և ուսուցման աշխատանքների կազմակերպում	Պարբերաբար (Տարեկան 2 անգամից ոչ պակաս)	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար, դպրոցի տնօրեն	ՄՓՎ, ՀԿ-ներ, հրշեջ-փրկարարական ջոկատներ
Շահագրգիռ կողմերի բացահայտում և ներգրավում ԱՌՆ գործողություններում	Տարին 1 անգամ	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ, ՀԿ-ներ

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱ ՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ
Ջրահեռացման համակարգի կարգավորում	Պարբերաբար	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Ոռոգման համակարգի կարգավորում	Մշտական	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Գետի հունի վտանգավոր տեղամասերում հենապատերի կառուցապատում	Հնարավորության դեպքում	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Գետի հունի վտանգավոր տեղամասերի մաքրման աշխատանքների կազմակերպում և իրականացում	Մշտական Նախքան վարարումները	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ,

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱ ՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ
Գետի հունի վտանգավոր տեղամասերի հենապատերի վերանորոգում կամ գաբիոնապատում	Հնարավորության դեպքում	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան, ՄՓՎ
Համայնքի բնակելի հատվածով հոսող ջրատարի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքների կազմակերպում	Հնարավորության դեպքում	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	ՀՀ կառավարություն, Մարզպետարան, միջազգային դոնոր կազմակերպություններ
Համայնքում առկա սելավատարերի հունի մաքրման աշխատանքների իրականացում	Մշտական գարնան և աշնան սկզբներին	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան ՄՓՎ
Կարգավորված շինարարության իրականացում	Մշտական	Համայնքի ղեկավար, ՀԿԹ ղեկավար	Մարզպետարան
Ճանապարհային նախագագուշացնող նշանների տեղադրում	Մշտական	Մարզպետարան, համայնքի ղեկավար	ԿՏ նախարարություն
Հակակարկտային կայանների ձեռքբերում, տեղադրում և սպասարկման իրականացում		Մարզպետարան, համայնքի ղեկավար	ՀՀ կառավարություն մարզպետարան, միջազգային դոնոր կազմակերպություններ, ՄՓՎ
Համայնքային բյուջեներում աղետների կանխարգելման և հետևանքների վերացման նպատակով ֆինանսական մասհանումների տրամադրում	Ամեն տարի	Համայնքի ղեկավար, ավագանի	Մարզպետարան, ՄՓՎ

ԱՆԿ գործողությունների պլանը աղետներին նախապատրաստման և կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների/քայլերի ամբողջականություն է, որի բարձր արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է հետևողական լինել վերոնշյալ բոլոր առաջարկներին: ԱՌՆ գործընթացին համապատասխան գործողությունները, ինչպիսիք են թիմերի ստեղծումը և նրանց ներգրավումը համայնքային մակարդակներում իրականացվող ծրագրերում, միանշանակ կհզորացնեն համայնքի կարողությունները: Իրագրվման և ուսուցման գործողությունները կնպաստեն, որպեսզի բնակիչները նույնպես կարևորեն աղետների ռիսկի նվազեցման գործընթացը և աջակցեն դրա զարգացմանը: Գործողությունների պլանում նաև նշված են այն հավանական գործընկերները, որոնք կարող են իրենց ներդրումն ունենալ պլանի տարբեր կետերի իրականացման մեջ:

Նյութը պատրաստելու ժամանակ օգտվել ենք հետևյալ աղբյուրներից

Էլ. կայքեր

www.mes.am, www.gov.am, www.yerevan.am, www.wikipedia.org
www.armstat.am, www.mfe.am, www.ifrc.org

Գրքեր և ձեռնարկներ

Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում (ՄԱԶԾ)
ԿԽ/ԿՄ ՄՖ ԱՌՆ տեղական մակարդակում ուղեցույց
Ֆիլիպինների ԿԽ ԱՌՆ տեղական մակարդակում ուղեցույց



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, Երևան, 0015, Պարոնյան 21/1,
Հեռ.՝ 583630, ֆաքս՝ 583630
www.redcross.am
Էլ. փոստ.՝ redcross@redcross.am